ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի կազմում ընդգրկվելու վերաբերյալ

Հարգելի քաղաքացիներ, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանը՝ հայտում ենք, որ ստորև ներկայացվող պահանջները բավարարող անձինք (ոչ հանրային հատվածից) կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզպետարան՝ ներքին աուդիտի կոմիտեի կազմում ընդգրկվելու համար:

Դիմումատուները պետք է ունենան առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում, ընդ որում.

1. Հանրային կազմակերպությունների գլխավոր աուդիտորների, վերահսկողական ծառայությունների աշխատակիցների (այդ թվում՝ Վերահսկիչ պալատի, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ հանրային հատվածի պետական կառավարման մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական ծառայությունների, ՀՀ բանկերի վերահսկողության և ներքին աուդիտի ստորաբաժանումների), պետական և համայնքային մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների անդամների (վերստուգողների) ամբողջական մեկ տարվա փորձը հավասարեցվում է ներքին աուդիտի ոլորտի մեկ տարվա փորձին:
2. 1-ին ենթակետում չնշված՝ քաղաքական կամ հայեցողական պաշտոնների պաշտոնավարման (բացառությամբ խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների պաշտոնների), հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն որակավորված աուդիտորների երկու ամբողջական տարվա աշխատանքային փորձը հավասարեցվում է ներքին աուդիտի ոլորտի մեկ տարվա փորձին:

Վերը նշված տվյալներին համապատասխանող անձինք կարող են ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը: